

## ՄՇԱԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«ՏՈՄԱՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ

«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՄԱՐԻ» ԲՆԱԳՐԵՐԻ

ԳՈՌ ԳԱԼՍՏՅԱՆ,

*Երևանի պետական համալսարան*

*Էլ. հասցե՝ gor.galstyan@ysu.am*

**DOI: 10.24234/scientific.v1i44.52**

### ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում մեր առջև խնդիր ենք դրել ներկայացնել «Մեկնություն տոմարի» բնագրերում առկա «Զի՞նչ է տոմար» մեկնողական հատվածի համեմատական քննությունը: Այդ նպատակով ուսումնասիրել ենք Անանիա Շիրակացու «Տիեզերագիտություն եւ տոմար», «Մեկնություն տոմարի Անդրեասայ», Սամուել Անեցու և Հակոբ Ղրիմեցու «Մեկնություն տոմարի» աշխատությունների համապատասխան հատվածները՝ ցույց տալու «տոմար» եզրույթի սահմանման անհրաժեշտությունը միջնադարյան տոմարագետների կողմից: Բաղդատելով տրված բացատրությունները՝ առանձնացվել և հստակեցվել են եզրույթին վերաբերող գրեթե բոլոր սահմանումներն ու նրբիմաստները: Այդ բնորոշումները համեմատել ենք նաև բառարաններում առկա իմաստային պարզաբանումներին:

**Բանալի բառեր՝** Տոմար, մեկնություն, Անանիա Շիրակացի, Սամուել Անեցի, Հակոբ Ղրիմեցի, Արեգակ, Լուսին, աստղեր:

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տոմարագիտության պատմության ուսումնասիրության մեջ արժեքավոր դեր ունեն հայոց տոմարի մեկնողական աղբյուրները: Մեկնությունները, ունենալով ինչպես մեկնաբանական, այնպես էլ ուսուցանող բնույթ, բազմիցս ընդօրինակվել և փոխանցվել են սերնդեսերունդ: Մեկնությունների արժեքը նաև տոմարական խրթին հարցերին պատասխան գտնելն էր:

Հայոց տոմարի մեկնությունների բնույթը բազմաշերտ է, քանզի դրանում քննարկվում են տոմարի ինչպես տեսական, այնպես էլ գործնական-կիրառական հարցեր: Այդ հարցերի լուծումն օգնում է բացահայտել այնպիսի իրողություններ, որոնք կարող են լրացում հանդիսանալ հայագիտական տարատեսակ բնագավառներում առկա բացերի համար:

### **ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Թեմայի ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք տոմարական նորագույն մեթոդը, որի կիրառումը ենթադրում է առհասարակ ուսումնասիրություններն օժտել տոմարական ճշգրիտ հաշվարկներով, որոնց շնորհիվ լուսաբանվում են այնպիսի երևույթներ, որոնք դեռևս ուսումնասիրված չեն, և դրանք զերծ են պահում սխալ և թերի հաշվարկներից և թյուրըմբռնումներից: Օգտվել ենք նաև նկարագրական, վերլուծական, պատմահամեմատական մեթոդներից:

### **ՔՆՆԱՐԿՈՒՄ**

«Մեկնութիւն տոմարի» բնագրերի տեսական շարքում կարևորություն ունեն «Զի՞նչ է տոմար» միավորի մեկնողական հատվածները: Այս հարցի ուսումնասիրությունն առաջնահերթ է, քանզի երբ խոսվում է «տոմար» հասկացության, տոմարի մեկնությունների, «Տոմարագիտություն» առարկայի, վերջինիս պարունակած սահմանների վերաբերյալ, հարկ է նախ գիտենալ, թե միջնադարյան տոմարագետներն ինչ են հասկացել տոմար ասելով, և արդյոք այսօր այն ունի այլ ընկալում, թե ոչ:

Նախ տեսենք՝ բառարաններն ինչպես են բացատրում «տոմար» բառը: «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում տրված են հետևյալ բացատրությունները՝ գրքի հատոր, գրվածքի հատված, մատյան, կոնդակ, «Տոմար Հաւատոյ» (*Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, 1937), հաշվի ցուցակ և ժամանակագրության կարգ, «թուականաց ազգաց», օրացույց և այլն (*Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, 1937): Հրաչյա Աճառյանի կազմած «Հայերեն արմատական բառարան»-ը ցուցում է այն մասին, որ «տոմար» բառն առաջացել է հունարեն “τομήριον” բառից, որ նշանակում է փոքր հատոր, գիրք, վավերագիրք և այլն, որը նվազական ձևն է “τόμος” բառի, որից ծագել են «տոմ», «տոմս» բառերը: «Տոմար»

բառը փոխառությամբ անցել է նաև այլ լեզուների՝ պարսկերենին, արաբերենին, վրացերենին, թուրքերենին: Լեզվաբանը բերում է նաև «Թումարի» տերմինը, որն Ատրպատականի մուսուլմանների մեջ վերջին շրջանում ծագած մի նոր կրոն է. այն ամբողջությամբ տարբերվում է իսլամից, և այս ուղղության Սուրբ Գիրքը կոչվում է «Թումար»: Հ. Աճառյանը հավելում է նաև, որ հայերենի նախնական ձևը եղել է «տոմար»-ը, որից առաջացել է «տովմար»-ը, այնուհետև՝ «տօմար» ձևը, որից էլ՝ «տամար»-ը: Իսկ «տոմար» տարբերակն առաջացել է արաբական բառաձևից (Աճառեան Հ., 1979; Բրուսյան Գ., 2016): «Արդի հայերենի բացատրական բառարան»-ի հեղինակ Ստեփանոս Մալխասյանցը «տոմար» բառը բացատրելիս կրկին սկզբնապես նշում է նրա՝ հունարեն “τομόριον” (հատորիկ, գիրք, վավերագիր) բառից ծագելը, այնուհետև բառի բացատրություններն այսպես է ներկայացնում. 1. Գիրք, մատյան: 2. Գրքի մի հատված՝ վերնագրով: 3. Գրվածք, թուղթ, նամակ: 4. Վավերական գրություն, փաստաթուղթ, արձանագրություն: 5. Աստղաբաշխական հաշիվների վրա հիմնված ժամանակագրական սխտեմ, տարեցույց: 6. Տոմարի վրա հիմնված աղյուսակ կամ գիրք, որտեղ նշանակվում է եկեղեցական տոների կարգը, տոնացույց: 7. Հաշվապահական մատյան (Ս. Մալխասեանց, 1944) «Գրաբարի բառարան»-ի հեղինակ Ռուբեն Ղազարյանի սահմանումները մեզ արդեն ծանոթ են, այսպես՝ 1. Գրքի մի հատված՝ վերնագրով: 2. Գիրք, մատյան: 3. Վավերական գրություն, փաստաթուղթ: 4. Թվական, ժամանակագրություն (Ղազարեան Ռ., 2000): Ընդհանրացնելով վերոբերյալը՝ հասկանալի է դառնում, թե ինչ մեծ ընդգրկվածություն ունի «տոմար» հասկացությունը, պարզ է դառնում, թե այն ինչ համընդգրկուն գիտակարգ է, հստակեցվում է, որ այն կապված է գիտության տարբեր շերտերի հետ (մասնավորապես աստվածաբանության և «հավատ» հասկացության հետ («զտոմար հաւատոյն»): Եվ, որ ամենակարևորն է, ամբողջապես ընկալելի է դառնում այն իրողությունը, թե ինչու են է. դարից սկսած՝ գրվել «Մեկնութիւն տոմարի» վերտառությամբ աշխատությունները. նման բազմաբովանդակ շերտեր պարունակող գիտակարգում չէին կարող պարբերաբար հարցադրումներ չառաջանալ, որոնք ևս մեկ անգամ ունեին մեկնության, ինչպես նաև խմբագրության կարիք: Ուստի, այդ աշխատությունները նաև ժամանակի հրամայականն էին և

ունեին մեծ հարկավորություն:

Ինչպես նշեցինք, «Մեկնություն տոմարի» բնագրերում մեծ կարևորություն ունեն «Ձի՞նչ է տոմար» հարցադրումն ու նրա մեկնաբանությունը: Տոմարական նշյալ միավորի մեկնություններն առկա են Անանիա Շիրակացու «Տիեզերագիտություն եւ տոմար» (Աբրահամյան Ա., 1940) և «Մեկնություն տոմարի Անդրեասայ» (Աբրահամյան Ա., 1940) Սամուել Անեցու «Մեկնություն տոմարի, զոր արարեալ է Սամուէլի քահանայի ի խնդրոյ Ստեփանոսի Իմաստասիրի» (Աբրահամյան Ա., 1952) և Հակոբ Ղրիմեցու «Մեկնություն տոմարի, զոր խնդրեալ Թովմա Ռաբունապետի Մեծեփոյ վանաց աստուածաբնակ Սուրբ ուխտին եւ սիրով զհայցուածս նորա կատարեալ Յակոբ վարդապետի Ղրիմեցոյ» բնագրում (Զ. Էյնաթյան, 2015):

Անանիա Շիրակացին իր ընդարձակ մեկնողական բնագրում առանձին գլխով անդրադառնում է «Ձի՞նչ է տոմար» հարցադրմանը և տալիս է պատասխանը. *«Տոմարն ժողով թարգմանի, եւ դարձեալ սկիզբն աստեղաբաշխութեան: Եւ զԲ. (2) ուց լուսաւորաց զհանգամանս ընթացիցն: Զարեգակն վասն հասարակաւորութեան: Զի յետ այսորիկ չարչարանքն Փրկչին եւ յարութիւնն: Իսկ զԼուսինն՝ զի ի լրման նորա կամաւոր չարչարանքն: Նաեւ զայլոց աստեղաց պատահմունս պարտ է արկանել ի նոյն իրողութիւնս ըստ ընթացից իւրեանց: Այլ զի մի անմուխ եւ անհաւասար իցեն աստեղացն, վասն ռամկացն տկարաց շարացան Բ. (2) լուսաւորացն պատահմամբ ընթացից սահմանեալ զժամանակաւորն, գիտել զտիեզերակալն անսխալապէս: Դարձեալ տոմարն ասի ժողով, վասն հասանելոյ աստեղաբաշխութեան, կամ վասն զտիեզերս ժողովելոյ յայս խմբաւորութիւնս: Կամ վասն երկուց լուսաւորացո՞ սակս ի միասին դրման, վասն որոյ ի Քրիստոս ժողովելոյս»* (Աբրահամյան Ա., 1940): Մեկնողական հատվածից հասկանալի է դառնում, որ «տոմար» եզրույթի իմաստներից մեկը «ժողով»-ն է: Անանիա Շիրակացին, ժողով ասելով, մեկնության սկզբնահատվածում նկատի է առնում աստղերի միատեղ հավաքվելը, ժողովվելը: Ասվածի փաստարկումը կապված է նախադասության շարունակության հետ, որտեղ ասվում է, որ տոմարը սկիզբն է, հիմքն է «աստեղաբաշխութեան», այսինքն՝ աստղագիտության: Հայ աստղագիտական միտքը զարգացած է եղել դեռևս խոր անցյալում: Եվ դրա վկայություններից մեկն է այն, որ դեռևս մեր թվարկությունից առաջ հայերն ունեցել

են բավականին զարգացած օրացույց՝ սկզբում լուսնային, այնուհետև՝ արեգակնային (Թումանյան Բ., 1964): Եվ այն, որ աստղագիտությունն ու տոմարագիտությունն անխզելիորեն կապված են, նկատելի է այն դեպքերում, երբ տոմարի մեկնություններում հանդիպում են աստղագիտական տարբեր երևույթների (օրինակ՝ Անկաստեղ, Ելաստեղ) հիշատակումներ, մեկնաբանություններ, ինչպես նաև ամիս-ամսաթվային տարատեսակ հարցեր: Մեկնության հաջորդ հատվածն արձանագրում է, որ տոմարը նաև երկու լուսատուների՝ Արևի և Լուսնի ընթացքն է: Գիտենք, որ Արարչագործության Դ. օրը Աստված ստեղծեց Արեգակը՝ ցերեկն իշխելու, Լուսինը՝ գիշերն իշխելու համար, և աստղերը. «*Եւ ասաց Աստուած. եղիցին լուսաւորք ի հաստարութեան երկնից, ի լուսաւորութիւն ի վերայ երկրի. եւ մեկնել ի մէջ տուրնջեան, եւ ի մէջ գիշերոյ. եւ եղիցին ի նշանս, եւ ի ժամանակս, եւ յաւուրս, եւ ի տարիս: Եւ եղիցին ի լուսաւորութիւն ի հաստարութեան երկնից ծագել յերկիր. եւ եղեւ այնպէս: Եւ արար Աստուած զերկուս լուսաւորսն զմեծամեծս. զլուսաւորն մեծ յիշխանութիւն տուրնջեան, եւ զլուսաւորն փոքր յիշխանութիւն գիշերոյ. եւ զաստեղս: Եւ եդ զնոսա Աստուած ի հաստարութեան երկնից լուսաւորս լինել յերկիր: Եւ իշխել տուրնջեան եւ գիշերոյ, եւ մեկնել ի մէջ լուսոյն եւ ի մէջ խաւարին: Եւ ետես Աստուած զի բարի է: Եւ եղեւ երեկոյ եւ եղեւ վաղորդայն, օ՛ր չորրորդ» (Ծննդոց Ա. 14-19): Ինչպես աստվածաշնչյան տեղին, այնպես էլ մեկնողական հատվածը սահմանում են, որ Արեգակը ստեղծվել է «*վասն հասարակաւորութեան*», այսինքն՝ ապահովելու համար ցերեկվա և գիշերվա զուգորդությունը, նաև հավասար լինելը: «*Հասարակաւորութիւն*» բառը նշանակում է նաև միաբանություն (Ղազարեան Ռ., 2000): Մեր կարծիքով բառի այսօրինակ բացատրությունը նկատելի է մեկնողական հատվածի հաջորդ նախադասության մեջ, այն է՝ «*Չարեգակն վասն հասարակաւորութեան: Զի յետ այսորիկ չարչարանքն Փրկչին եւ յարութիւնն*»: Նշանակալի է նաև մեկնողական պատառիկի հաջորդ հատվածը՝ «*Իսկ զԼուսինն՝ զի ի լոման նորա կամաւոր չարչարանքն*»: Գիտենք, որ երբ Հիսուս Քրիստոս իր չարչարանքներն էր կրում խաչի վրա, *կեսօրին ամբողջ երկրի վրա խավար եղավ մինչև ժամը երեքը* (Մատթ. ԻԷ. 45, հմմտ՝ Մարկ. ԺԵ. 33, Ղուկ. ԻԳ. 24): Այնուհետև երբ Հիսուս Քրիստոս ավանդեց հոգին, տաճարի վարագույրը պատռվեց, երկիրը շարժվեց և ժայռեր ճեղքվեցին, գերեզմանները բացվեցին, ննջեցյալ սրբերի բազում*

մարմիններ հարություն առան ու Նրա հարությունից հետո գերեզմաններից ելնելով՝ մտան սուրբ քաղաքը ու շատերին երևացին (*Մատթ. ԻԷ. 50-53, հմմտ' Մարկ. ԻԵ. 37-39, Ղուկ. ԻԳ. 44-46*): Այսինքն՝ Քրիստոսի չարչարանքների ժամանակ դիտվել են Լուսնի և Արեգակի խավարումներ, որոնք էլ «տոմար»-ի կարևոր իմաստներից և մեկնաբանություններից են: Հարկ է իմանալ, որ նորալուսնի ժամանակ, երբ Արեգակը, Լուսինը և Երկիրը գտնվում են գրեթե մի ուղղի վրա, Լուսնի ստվերն ընկնում է Երկրի վրա և Երկրի մակերևույթի որոշ մասերից դիտելիս Արեգակն ամբողջությամբ կամ մասամբ չի երևում, որն էլ ենթադրում է Արեգակի լրիվ կամ մասնակի խավարումը (*Հայկական սովետական հանրագիտարան*, 1979): Իսկ Լիալուսնի ժամանակ, երբ Արեգակը, Երկիրը և Լուսինը գտնվում են գրեթե մի ուղղի վրա, Երկրի ստվերն ընկնում է Լուսնի վրա, և տեղի է ունենում Լուսնի լրիվ կամ մասնակի խավարում (*Հայկական սովետական հանրագիտարան*, 1979): Ուստի հասկանալի է դառնում, որ Անանիա Շիրակացին, մեկնելով «տոմար» եզրույթը, երբ այն բացատրում է որպես «ժողով», նկատի է առնում բառի նաև «խավարում» իմաստը, երբ Արեգակն ու Լուսինը հանդես են գալիս միաժամանակ: Հայտնի է նաև, որ Հիսուս Քրիստոս հարություն առավ խաչելությունից և մահվանից հետո երրորդ օրը՝ կիրակի առավոտյան, երբ նոր լուսանում էր (*Մատթ. ԻԸ. 1, հմմտ' Ղուկ. ԻԴ. 1, Մարկ. ԺԶ. 1*): Այս հատվածի առավել համակողմանի հասկացվածությանն ու մեկնաբանությանն է օժանդակում Հակոբ Ղրիմեցու «Մեկնութիւն տոմարի» բնագրի մեկնողական մասը, որտեղ նա, մեկնաբանելով «տոմար» բառի «ժողով» իմաստը, տալիս է այս բացատրությունն ու մասնավորապես ասում. «*Չորրորդ' ասի ժողով վասն զի ներգործութեամբ ի Խաչելութեան ժողովեցաւ Լուսինն առ Արեգակն, զի յաւուր Խաչելութեան Լուսինն ի լրման էր տասնհինգ աւուրն ձեւի եւ քանակի, քանզի բարդ էր եւ բոլոր եւ լիալուսին: Իսկ զի Արարիչն Աստուած ի վեցերորդ ժամուն, որ մերկ բեւեռեալ կայր ի խաչին, չհանդուրժեալ լուսաւորացն մերկութեան Արարչին իւրեանց, մերկացուցին զինքեանս ի Լուսոյ իւրեանց, զի ծածկեցին զմերկութիւն Արարչին իւրեանց... Զի ընդ խոնարհելն Արեգական յերեկոյին ի մուրն Արևու ժամանեսցէ Լուսինն յեղք Արևու... մերկացաւ Արեգակն լուսոյն եւ խաւարեցաւ... եւ [Լուսինն] ի տեղին իւր մերկացաւ ի լուսոյն եւ խաւարեցաւ» (Էյնաթյան Զ., 1987): Մեկնաբանական այս հատվածը ոչ միայն մանրամասնորեն բացատրում է Հիսուս*

Քրիստոսի չարչարանքների և խաչելության ժամանակ տեղի ունեցած Արեգակի և Լուսնի խավարումները, այլև հավաստում է, որ մեկնության մեջ առկա «հասարակաւորութիւն» բառի «միաբանություն», այսինքն՝ Արևի և Լուսնի միատեղ, միաժամակ լինելու իմաստի շուրջ մեր ենթադրությունը ճիշտ էր: *«Նաեւ զայլոց աստեղաց պատահմունս պարտ է արկանել ի նոյն իրողութիւնս ըստ ընթացից իւրեանց»* նախադասությունը կանխորոշում է, որ աստղերի ևս միատեղ հավաքվելը «տոմար» բառի իմաստներից մեկն է: «Տոմար»-ի այսիմաստ ընկալումը վերջնականապես հաստատվում է բնագրի մեկնողական հատվածի վերջնամասում՝ *«Դարձեալ տոմարն ասի ժողով, վասն հասանելոյ աստեղաբաշխութեան, կամ վասն զտիեզերս ժողովելոյ յայս խմբաւորութիւնս: Կամ վասն երկուց լուսաւորացոյ սակս ի միասին դրման, վասն որոյ ի Քրիստոս ժողովելոյս»* (Աբրահամյան Ա., 1940):

«Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» բնագրի հեղինակ Անանիա Շիրակացին և «Մեկնութիւն տոմարի, զոր արարեալ է Սամուէլի քահանայի ի խնդրոյ Ստեփանոսի Իմաստասիրի» բնագրի հեղինակ Սամուել Անեցին նշյալ մեկնությունների մեջ գրեթե բառացի կրկնում են այն, ինչ ասվել էր արդեն Անանիա Շիրակացու «Տիեզերագիտութիւն եւ տոմար» աշխատության մեջ: Սա ևս ապացույցն է այն բանի, որ Անանիա Շիրակացուց հետո հետագա շրջանի տոմարագետներն իրենց աշխատությունները գրելու համար մեծ մասամբ օգտվել են հենց Շիրակացուց՝ երբեմն բառացի ընդօրինակելով նրան: Միակ տարբերությունը, որ ունեն այս երկու բնագրերը՝ ի համեմատ «Տիեզերագիտութիւն եւ տոմար» աշխատության, այն է, որ երկու բնագրերում էլ մեկնողական պատառիկի վերջում կա հետևյալ նախադասությունը՝ *«Դարձեալ՝ է՛ տոմար Արեգական եւ Լուսնի ընթացք»* (Աբրահամյան Ա., 1940): Տոմարի՝ որպես Արեգակի և Լուսնի ընթացք բնորոշումը կա նաև նշյալ բոլոր մեկնությունների առաջնահատվածում: Ուստի չենք կարող ասել, որ այս հատվածը առանձնահատուկ է, այլ զուտ բանասիրական բնույթի տարբերություն է, որը մեկնության վերջում ևս մեկ անգամ շեշտում է տոմարի այդօրինակ իմաստը:

«Զի՞նչ է տոմար» մեկնողական պատառիկի մեկնաբանության տեսանկյունից յուրօրինակ է ԺԴ. - ԺԵ. դարի տոմարագետ Հակոբ Ղրիմեցու «Մեկնութիւն տոմարի» աշխատության «Զի՞նչ է տոմար» մեկնողական դրվագը: Առհասարակ, կարելի է

ասել, որ Հակոբ Ղրիմեցու մեկնությունը տոմարի թե՛ տեսական, թե՛ գործնական հատվածների բացատրություններում առանձնանում է յուրատեսակ ոճով և մեկնաբանության եղանակով, որն ավելի պարզ է և մատչելի: Նրա մեկնաբանություններն առանձնանում են հետաքրքիր հարցադրումներով, որից հետո նշված հարցումներին տրվում են սպառիչ պատասխաններ: Իսկ մեկնողական վերոնշյալ հատվածը սկսվում է այսպես. *«Զի՞նչ է տոմար. Բայց յառաջ, քան զայս խնդրելի է, թե՛ քանոն եւ սահման իմաստասիրաց գոլ, զի ամենայն իրողութիւնս առ ի գիտել եւ ճանաչել զորպիսութիւն իրին, զչորեսինս զայս խնդրելի է, նախ զէ՛ն, երկրորդ՝ զինչ էն, երրորդ՝ զորպիսի ինչ էն, չորրորդ՝ զվասն էրն»* (Էյնաթյան Զ., 1987): Ասվածից երևում է, թե Հակոբ Ղրիմեցին ինչքան մեծ կարևորություն է տվել «տոմար» եզրույթի բացատրությանը, քանի որ դրա ճիշտ իմացումն ընկած է տոմարագիտության այլևայլ հարցերի հստակ հասկացման հիմքում: Այդ պատճառով տոմարագետն առաջադրում է չորս հարց, թե արդյոք կա, գոյություն ունի առհասարակ «տոմար» հասկացություն, թե՞ ոչ, երկրորդ՝ եթե կա, ապա ի՞նչ է իրենից ներկայացնում, երրորդ՝ ինչպիսի հատկանիշներով, հատկություններով է օժտված այդ, ապա վերջինը՝ ինչ նպատակով է կիրառվում: Եվ մինչև այս հարցերին պատասխան տալը Ղրիմեցի տոմարագետը այն առավել դյուրընկալելի դարձնելու համար բերում է հույն անվանի փիլիսոփա Սոկրատեսի անվան օրինակը, որով պատասխաններ է տալիս այս չորս հարցերին, այնուհետև դառնում «տոմար» հասկացությանը: Կարևոր է ընդգծել, որ Հակոբ Ղրիմեցին այստեղ ուղղակի կամ միջնորդավորված (օրինակ՝ Եղիշեի (Շիրինյան, Մ. Է. 2017) կամ Գրիգոր Տաթևացու գրվածքների միջոցով) օգտվել է Արիստոտելի «Ստորոգություններ» երկից: Եվ պատասխանելով հարցադրումներին՝ ասում է. *«Այսպէս իմա եւ զտոմարս, զի ինքն իր մի է: Եւ թէ զինչ է, ասեմք տոմար է, եւ թէ որպիսի ինչ է տոմարն, ասեմք՝ այսպիսի ինչ է, որ առնէ եօթներեակ եւ վերադիր եւ այլն: Եւ թէ վասն էր՝ առնէ, ասեմք՝ զի գտանիցեմք զաւուրն պատկերն եւ զծնունդն եւ զքանիք եւ զլրումն Լուսնի եւ այլն»* (Էյնաթյան Զ., 1987): Հակոբ Ղրիմեցին, շարունակելով մեկնողական պատառիկը, ընթերցողին առաջարկում է առավել մանրամասնաբար ուսումնասիրել և հասկանալ տոմարի ողջ էությունը: Նա նշում է, որ *«...տոմար է նախ եօթ մոլորակացն շաւղաց անսխալ գիտութիւն, որով կարասցէ գիտել զյամր եւ զարագ*



*շարժութիւն ընթացից նոցա»* (Էյնաթյան Զ., 1987): Ղրիմեցիին այնուհետև մեկնում է, թե ինչ է ասել մոլորակ, և թվարկում է այդ յոթ մոլորակները, որոնք են Երևակը, Լուսնագը, Հրատը, Արեգակը, Լուսաբերը, Փայլածուն և Լուսինը: Մեկնողական հաջորդ իմաստը, որով Հակոբ Ղրիմեցիին բացատրում է «տոմար» բառը, «ժողով»-ն է: Տոմարագետը, սակայն, նշում է, որ դա վերաբերում է ոչ միայն մոլորակներին, այլև կենդանակերպերին, Հյուսիսային և Հարավային բևեռներին, Հայկին, Սայլին և առհասարակ նշանավոր աստղերի (Էյնաթյան Զ., 1987): «Տոմար»-ի՝ որպես «ժողով» իմաստներից մեկն էլ քննարկեցինք վերոնշյալում՝ Անանիա Շիրակացու մեկնողական բնագրի համապատասխան հատվածի քննության համար: Սակայն, Հակոբ Ղրիմեցիին այլ նրբիմաստ էլ է տալիս «ժողով» բառին՝ այն կիրառելով ուղիղ իմաստով: Որպես օրինակ՝ տոմարագետը բերում է Էաս Ալեքսանդրացու գումարած ժողովը, որը նպատակ ուներ ստեղծել այնպիսի Զատկացուցակ, որն իր ավարտից հետո հնարավորություն կունենար կրկնվելու նույնությամբ, որն էլ եղավ 532-ամյա Զատկացուցակը, որը Լուսնի 19-ամյա ցիկլի և արևային 28-ամյա փոքր շրջանի կամ Բեսեքիստոնի արտադրյալի թիվն է (Ռ. Վարդանյան, 1999) *«...Վասն որոյ, մեղասաներորդ՝ այր մի ճշտագունիցն ուսումնասիրաց յեգիպտական մայրաքաղաքէն յԱղեքսանդրեայ՝ Էաս անուն կոչեցեցալ, ծայն արկեալ առ ինքն ժողովէ եւ հաւաքէ զայրս կորովամիտս... խորհեին գրանել զդարձ Արեգական եւ Լուսնի ի միում ամի...»* (Հակոբ Ղրիմեցի, 1987):

Այսպիսով՝ Հակոբ Ղրիմեցու մեկնողական պատառիկից կարելի է առանձնացնել «տոմար» հասկացության հետևյալ իմաստները. 1. Ներկայացնելով տոմարի նշանակությունը՝ նա նշում է, որ տոմարն անհրաժեշտ է Լուսնի ծննդյան և լրման օրերի պատկերը գտնելու համար (իհարկե, տոմարի այս նշանակությունը նրա բազում իմաստներից մեկն է միայն), 2. Տոմարը ընկալվում է որպես յոթ մոլորակների շարժման ճանապարհի անսխալ իմացություն, 3. Տոմարի բովանդակած իմաստներից մեկը «ժողով»-ն է, 3.1. «ժողով» բառի առաջին ենթիմաստը հեղինակը ներկայացնում է որպես Արևի և Լուսնի միատեղ լինելը, այսինքն՝ «խավարում»-ը: Տոմարն այստեղ հասկացվում է նաև որպես աստղագիտություն, 3.2. «ժողով»-ի հաջորդ նրբիմաստը վերաբերում է կենդանակերպերի շարժման ընթացքին, Հյուսիսային և Հարավային բևեռների,

շատ նշանավոր աստղերի ընթացքին, 3.3. Բառի հաջորդ նրբերանգը «ժողով»-ի ուղիղ իմաստն է՝ նկատի ունենալով Ալեքսանդրիայում Էաս Ալեքսանդրացու գլխավորությամբ գումարված ժողովը, որտեղ ընդունվեց Էասյան ՇԼԲ. (532) - ամյա Զատկացուցակը:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ամփոփելով սույն աշխատանքը՝ ընդգծենք, որ «Զի՞նչ է տոմար» մեկնողական հատվածի առկայությունը «Մեկնութիւն տոմարի» բնագրերի շարքում վկայում է այն մասին, որ մեկնությունների հեղինակները նախ բացատրել են, թե ինչ է իրենից ներկայացնում «տոմար» հասկացությունը, ապա տվել են տոմարի տեսական և գործնական այլևայլ հարցերի մեկնաբանությունը: Անանիա Շիրակացին տոմարը սահմանում է նախ որպես ժողով՝ նկատի ունենալով աստղերի, ինչպես նաև Արևի և Լուսնի միատեղ հավաքվելը («խավարումը»): Մեկնության մեջ առկա «հասարակաւորութիւն» բառի որպես «միաբանություն» իմաստի ընկալումը ցույց ենք տվել Հիսուս Քրիստոսի չարչարանքների և խաչելության ժամանակ տեղի ունեցած Լուսնի և Արեգակի խավարումների օրինակով: Մեր այս ենթադրության ապացույցները կարելի է գտնել Հակոբ Ղրիմեցու կատարած մեկնության մեջ: «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» և Սամուել Անեցու «Մեկնութիւն տոմարի» բնագրերում գրեթե բառացի երկրորդվում են «տոմար» բառի այն իմաստները, որոնք արդեն ասվել էին Անանիա Շիրակացու ընդարձակ մեկնության մեջ: Այս առումով յուրահատուկ է Հակոբ Ղրիմեցու մեկնությունը, որտեղ հեղինակը անհամեմատ մատչելի կերպով տալիս է եզրույթի բացատրությունները՝ բառի՝ առավել շատ իմաստներ նշելով: Առանձնակի կարևոր է այն փաստը, որ Հակոբ Ղրիմեցին միջնորդավորված կամ ուղղակի կերպով օգտվել է նաև Արիստոտելի «Ստորոգություններ» երկից: Կարևոր է, որ «տոմար»-ն առնչակցվում է նաև «հավատ»-ի հետ, որից վերստին կարելի է եզրակացնել, որ տոմարագիտությունն աստվածաբանության անքակտելի մասն է և որ տոմարագետները նախ և առաջ եղել են հրաշալի աստվածաբաններ: Նաև, բառարաններում առկա են որոշ բացատրություններ, որոնք տեղ չեն գտել «Մեկնութիւն տոմարի» բնագրերում (օրինակ՝ գիրք, մատյան, վավերագիր և այլն), որովհետև դրանք չեն ունեցել բուն տոմարագիտական կամ աստղագիտական նրբիմաստ:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Աբրահամյան Ա.** (1940). *Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն եւ տոմար*. Երևան.
- Աբրահամյան Ա.,** (1952). *Սամվել Անեցու տոմարական և տիեզերագիտական աշխատությունը*. Էջմիածին.
- Աճառեան Հ.** (1979). *Հայերէն արմատական բառարան: Vol. Դ*. Երևան.
- Էյնաթյան Զ.** (2015). *Տիեզերագիտության և տոմարի մեկնություններ*. Երևան.
- Էյնաթյան Զ.** (1987). *Հակոբ Ղրիմեցի, Տոմարագիտական աշխատություններ*. Երևան.
- Թումանյան Բ.** (1964). *Հայ աստղագիտության պատմություն: Vol. Ա*. Երևան.
- Հայկական սովետական հանրագիտարան: Vol. Ե*. (1979). Երևան.
- Ղազարեան Ռ.** (2000). *Գրաբարի բառարան: Vol. Բ*. Երևան.
- Մալխասեանց Ս.** (1944). *Հայերէն բացատրական բառարան: Vol. Դ*. Երևան.
- Նոր բառգիրք հայկազեան լեզուի, երկասիրություն երից վարդապետաց յիշատակութենէ Մեծին Մխիթարայ Աբբաօր Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատուրոյ Սիրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան: Vol. Բ*. (1837). Վենետիկ.
- Բրուտյան Գ.** (2016). *Հայկական տոմարագիտություն*. Երևան.
- Շիրինյան Մ. Է.** (2017). *Աստվածաբանությունը և մեկնությունը, Տարեգիրք Աստվածաբանության-ԺԲ*. Երևան.
- Վարդանյան Ռ.** (1999). *Հայոց տոնացույցը (4-18-րդ դարեր)*. Երևան.

## REFERENCE LIST

- Abramyan A.** (1940). *Ananiya SHirakaci, Kosmologiya i tomar (Anania Shirakashi, Cosmology and Tomar)*. Erevan.
- Abraamyan A.,** (1952). *Tomaristsko-kosmologicheskij trud Samvela Anecu (Tomar-cosmological work by Samvel Anetsi)*. Echmiadzin.
- Adzharyan H.** (1979). *Armyanskij radikal'nyj slovar' (Armenian radical dictionary)*. Tom. D. Erevan.

- Ejnatyan ZH.** (2015). Interpretacii kosmologii i knigi (*Interpretations of cosmology and books*). Erevan.
- Ejnatyan ZH.** (1987). Akop Hrimeci, Tomarologicheskie trudy (*Hakob Khrimetsi, Tomarological Works*). Erevan.
- Tumanyan B.** (1964). Istoriya armyanskoj astronomii (*History of Armenian astronomy*). Tom. A. Erevan.
- Armyanskaya sovetskaya enciklopediya (Armenian Soviet Encyclopedia)*. Tom. E. (1979). Erevan.
- Kazaryan R.** (2000). Slovar' Grabarya (*Dictionary Grabar*). Tom. B. Erevan.
- Malhaseanc S.** (1944). Armyanskij tolkovyj slovar' (*Armenian explanatory dictionary*). Tom. D. Erevan.
- Novyj slovar' yazyka hajkaz, posvyashchennyj pamyati velikogo uchitelya Mhitaraya Abbahora H. Gabrieli Avetikyan, A. Hachaturaj Sirmelyan, A. Mkrtchi Ozherian (A new dictionary of the Haykaz language dedicated to the memory of the great teachers Mkhitaray Abbahor Kh. Gabrieli Avetikyan, A. Khachaturay Sirmelyan, A. Mkrtchy Ozherian)*. Tom. B. (1837 g.). Veneciya.
- Brutyan G.** (2016). Armyanskaya bibliografiya (*Armenian bibliography*). Erevan.
- SHirinyan M. E.** (2017). Bogoslovie i tolkovanie (*Theology and interpretation*), Ezhegodnik bogosloviya-ZB. Erevan.
- Vardanyan R.** (1999). Armyanskij kalendar' (*Armenian calendar*) (4-18 vv.). Erevan.

## РЕЗЮМЕ

### ЗНАЧЕНИЕ ТЕРМИНА "КАЛЕНДАРЬ" В СООТВЕТСТВИИ С ОРИГИНАЛАМИ "ТОЛКОВАНИЯ КАЛЕНДАРЯ"

#### ГОР ГАЛСТЯН

В этой статье рассматривается интересный отрывок "Что такое календарь", включенной в оригиналы "Толкования календаря" разных авторов. Наша задача - провести сравнительный анализ этого пассажа в работах Анании Ширакаци "Космология и календарь", "Интерпретация календаря Андреаса", "Интерпретация

календаря" Самуэля Анеци и Акопа Крымского и показать необходимость определения термина "календарь" средневековыми календаристами. Сравнивая эти объяснения, были выделены и уточнены почти все определения и нюансы, связанные с этим термином. Особое внимание уделено и семантическим пояснениям, доступным в современных словарях.

**Ключевые слова:** Календарь, толкование, Анания Ширакаци, Самуэль Анеци, Акоп Кривец, Солнце, Луна, звезды, затмение, собрание

## ABSTRACT

### THE MEANING OF "CALENDAR" TERM IN ACCORDANCE WITH THE ORIGINALS OF "INTERPRETATION OF THE CALENDAR"

**GOR GALSTYAN**

The article discusses the issue of comparative study of the interpretive part "What is a Calendar" included in the works of different authors concerning the "Interpretation of the Calendar". Our task is to do a comparative analysis of this passage in the writings by Anania Shirakac'i "Cosmology and Calendar", "Interpretation of the Calendar of Andreas", "Interpretation of the Calendar" by Samuel Anec'i and by Hakob Khrimetc'i, and to show why they considered important to define and explain the term "calendar". While comparing these explanations, we have identified and clarified almost all definitions and nuances associated with this term. A special attention was paid to the semantic explanations given in dictionaries.

**Key words:** Calendar, interpretation, Anania Shirakac'i, Samuel Anec'i, Hakob Khrimec'i, Sun, Moon, stars, eclipse, assembly.

Հոդվածը ստացվել է՝ 07.02.2023թ.

Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 08.02.2023թ.

Հոդվածը երաշխավորվել է հրատարակման՝ 14.03.2023թ.